



Վերջին թարմացումները. (փոփոխությունները նշված են դեղին գույնով)

11/22/21: Թարմացվել է՝ ավելացնելու հղումներ Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների Հրամանագրի Հաճակ Տրվող Հարցերի (ՀՏՀ) Էջին:

11/2/2021: Ուժի մեջ է 2021 թվականի նոյեմբերի 8-ից. Լոս Անջելես Քաղաքում տեղակայված սնունդ և ըմպելիքներ մատուցող հաստատությունները ենթակա են Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների Վերաբերյալ Հրամանագրին: Ավելացվել է ՀՏՀ՝ պարզաբանելու, որ Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների Վերաբերյալ Հրամանագիրը չի վերաբերում այն բիզնեսներին, որոնք արդեն իսկ պահանջում են հաստատել պատվաստման կարգավիճակը՝ համաձայն Լոս Անջելեսի Շրջանի Առողջության Վարչության Պատասխանատուի Հրամանի:

Հաճախ Տրվող Հարցերի (ՀՏՀ) տվյալ փաստաթուղթը նախատեսված է՝ աջակցելու գիշերային ակումբներին, լաունջներին, բարերին, գարեջրատներին, գինետներին/գործարաններին և օղեգործարաններին համապատասխանել Լոս Անջելեսի Շրջանի [Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանին](#): ՀՏՀ-ի այս փաստաթուղթը վերաբերում է գիշերային ակումբներին, լաունջներին, բարերին, գարեջրատներին, գինեգործարաններին և օղեգործարաններին, որոնք արտոնագրված չեն որպես լիարժեք ծառայություններ տրամադրող ռեստորաններ:

ՊԱՏՎԱՍՏԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՏՈՒԳՈՒՄ

1. Որո՞նք են Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանի նոր պահանջները, և ե՞րբ են դրանք ուժի մեջ մտնում:

2021 թվականի հոկտեմբերի 7-ից սկսած բարերը, գարեջրատները, գինետները/գործարանները և օղեգործարանները պետք է 12 տարեկան և ավելի բարձր տարիքի հաճախորդներից պահանջեն տրամադրել COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակի ապացույց և լուսանկարով նույնակացման քարտ (ID)՝ հաստատություն մուտք գործելու համար: 2021 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում բոլոր հաճախորդները պետք է ներկայացնեն ապացույց, որ ստացել են COVID-19-ի դեմ պատվաստանյութի առնվազն մեկ դեղաչափը՝ հաստատություն մուտք գործելու և փակ տարածքում սպասարկվելու, ինչպես նաև հաստատության փակ հատվածներում գործողություններին մասնակցելու համար: Իսկ 2021 թվականի նոյեմբերի 4-ից սկսած 12 տարեկան և բարձր տարիքի բոլոր հաճախորդները պետք է ներկայացնեն COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց՝ հաստատություն մուտք գործելու և փակ տարածքում սպասարկվելու, ինչպես նաև հաստատության փակ հատվածներում գործողություններին մասնակցելու համար: Մինչև երկու տարեկան երեխաներն ազատվում են այս պահանջից: Բացի այդ, մինչև 2021 թվականի նոյեմբերի 4-ը տեղում աշխատող բոլոր աշխատակիցները պետք է իրենց գործատուին ներկայացնեն COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց:

2021 թվականի հոկտեմբերի 7-ից սկսած գիշերային ակումբները և լաունջները, որոնց մուտքը բաց է միայն 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար, պետք է հաճախորդներից և տեղում աշխատող աշխատակիցներից մուտքի համար պահանջեն տրամադրել COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակի ապացույց և լուսանկարով նույնակացման քարտ (ID): 2021 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում հաճախորդները պետք է ներկայացնեն ապացույց, որ ստացել են COVID-19-ի դեմ պատվաստանյութի առնվազն մեկ դեղաչափը՝ գիշերային ակումբ և լաունջ մուտք գործելու և փակ տարածքում սպասարկվելու և գործողություններին մասնակցելու համար: Իսկ





Ի՞նչ Պետք Է Իմանան Գիշերային Ակումբները, Լաունջները, Բարերը, Գարեջրատները, Գինետները/գործարանները և Օղեգործարանները

2021 թվականի նոյեմբերի 4-ից սկսած բոլոր հաճախորդները պետք է ներկայացնեն COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց՝ հաստատություն մուտք գործելու և փակ տարածքում սպասարկվելու և գործողություններին մասնակցելու համար:

Բացի այդ, մինչև 2021 թվականի նոյեմբերի 4-ը տեղում աշխատող բոլոր աշխատակիցները պետք է իրենց գործատուին ներկայացնեն COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց:

2. Կարո՞ղ եմ չպատվաստված կամ մասամբ պատվաստված հաճախորդները ներկայացնել նախորդող 72 ժամվա ընթացքում արված COVID-19-ի (ախտորոշիչ) թեստի բացասական արդյունք՝ հաստատություն մուտք գործելու և փակ տարածքում սպասարկվելու համար:

Ոչ: COVID-19-ի (ախտորոշիչ) թեստի բացասական արդյունքը չի կարող որակվել որպես այլընտրանք՝ COVID-19-ի դեմ պատվաստման ապացույց ներկայացնելուն:

3. Իմ գիշերային ակումբը, լաունջը, բարը, գարեջրատունը, գինետունը կամ օղեգործարանը գտնվում է Լոս Անջելես Քաղաքում: Ինչպե՞ս է Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների Վերաբերյալ Հրամանագիրը ազդում մեր բիզնեսների վրա:

2021թ. նոյեմբերի 8-ից սկսած սնունդ և ըմպելիքներ մատուցող հաստատությունները, ներառյալ ռեստորանները, բարերը, արագ սննդի հաստատությունները, սրճարանները, գինետների/գործարանների, գարեջրատների/գործարանների, օղեգործարանների համոտեսի սենյակները և ճաշարանները, որոնք տեղակայված են Լոս Անջելես քաղաքում, ենթակա են [Լոս Անջելես Քաղաքի Պատվաստումների Վերաբերյալ Հրամանագրին](#):

Այնուամենայնիվ, Լոս Անջելես Քաղաքի Հրամանագիրը բացահայտ կերպով նշում է, որ Հրամանագրի պահանջները չեն վերաբերում «բոլոր այն վայրերին, որոնցից, Հանրային Առողջության Վարչության Հրամանի համաձայն, պահանջվում է ստուգել COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակի ապացույցը՝ նախքան փակ վայրում տվյալ անձին սպասարկելը»: Սա նշանակում է, որ եթե ձեր գիշերային ակումբը, լաունջը, բարը, գարեջրատունը, գինետունը կամ օղեգործարանը արդեն իսկ հետևում են Լոս Անջելեսի Շրջանի Առողջության Պատասխանատուի Հրամանին, ձեր բիզնեսը ենթակա չէ Հրամանագրին և փոխարենը պետք է շարունակի հետևել Շրջանի [Առողջության Վարչության Պատասխանատուի Հրամանով](#) սահմանված պատվաստման պահանջներին:

Լոս Անջելես Քաղաքում տեղակայված սնունդ և ըմպելիքներ մատուցող մյուս բոլոր հաստատությունները, որոնք թվարկված են Հրամանագրում, պետք է կարդան [Լոս Անջելես Քաղաքի Հրամանագիրը](#) և հետևեն Հրամանագրի պահանջներին: Լոս Անջելես Քաղաքի Հրամանագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հասանելի են [SafePass LA](#) կայքէջում և [Հաճախ Տրվող Հարցերի \(ՀՏՀ\) Էջում](#):

4. Հաստատության ո՞ր հատվածներում գտնվելու համար է պահանջվելու ստուգել հաճախորդներին՝ COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակը:



Ի՞նչ Պետք Է Իմանան Գիշերային Ակումբները, Լաունջները, Բարերը, Գարեջրատները, Գինետները/գործարանները և Օղեգործարանները

Այն հաճախորդները, որոնք նստած են, սպասարկվում են կամ մասնակցում են գործողությունների բիզնեսի փակ տարածքներում, պետք է ստուգվեն և ներկայացնեն իրենց COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակի ապացույցը՝ ըստ սահմանված կարգի, նախքան բիզնեսի փակ տարածք մուտք գործելը: Հաճախորդները կարող են սպասարկվել կամ մասնակցել գործողությունների բացօթյա տարածքներում առանց պատվաստման կարգավիճակի ստուգման:

Այն անձանց, որոնք չեն ներկայացնում պատվաստման կարգավիճակի ապացույց, կարող են թույլատրել մուտք գործել բիզնեսի փակ հատվածներ՝ սահմանափակ պայմաններով: Նման անձինք պետք է կրեն լավ ծածկող դիմակ և միայն մուտք գործեն հաստատություն՝ 1)Որպես իրենց աշխատանքի մաս՝ առաքում կատարելու կամ պատվերը վերցնելու, ծառայություն մատուցելու կամ վերանորոգման աշխատանք կատարելու նպատակներով, կամ արտակարգ իրավիճակների դեպքում կամ կարգավորիչ գործողությունների նպատակով, 2) հասնելու հաստատության բացօթյա տարածք կամ օգտվելու զուգարանից և 3) պատվիրելու, վերցնելու կամ վճարելու տանելու համար նախատեսված սննդի կամ ըմպելիքի համար. այս վերջին դեպքում, հաճախորդները պետք է սպասեն դրսում, մինչև իրենց ուտելիքը կամ ըմպելիքը պատրաստ լինի վերցնել-տանելու համար:

5. Արդյո՞ք բարերից պահանջվելու է ստուգել փակ տարածքում գտնվող հաճախորդների պատվաստման կարգավիճակը, եթե սնունդ է մատուցվում:

Այո: Ցանկացած հաստատությունից, որը հիմնականում գործում է որպես բար, պահանջվելու է ստուգել հաճախորդի պատվաստման կարգավիճակը: Այդպիսի հաստատություններն ունեն հանրային առողջության վարչության կողմից տրված ցածր վտանգավորություն ներկայացնող սննդի կետերի թույլտվություն: Դա ներառում է այն բարերը, որոնք կարող են տեղում նախուտեստներ մատուցել, սակայն չեն գործում որպես լիարժեք ծառայություններ մատուցող, նստել-ուտելու համար նախատեսված ռեստորաններ: Ալկոհոլային խմիչքներ մատուցող երեկոյան ժամանցի այլ հաստատությունները, օրինակ՝ կարաոկե բարերը, նույնպես պետք է բավարարեն այս պահանջները:

Սեփականության իրավունք և թույլտվություն: Միջին կամ բարձր վտանգավորության ռեստորանի ներսում գտնվող բարերից, որոնք գործում են միևնույն սեփականության ներքո, չի պահանջվում ստուգել պատվաստման կարգավիճակը:

Այն բարերում, որոնք կից են (միացված են) համատեղ սեփականության ներքո գտնվող, բայց առանձին թույլտվություն ունեցող միջին կամ բարձր վտանգավորության խոհանոցին կամ ռեստորանին, և որտեղ ճաշացուցակը «բարի տարածքում» ընգրկում է ուտելիք, որը պատրաստվել է այդ խոհանոցում, չի պահանջվում ստուգել պատվաստման կարգավիճակը: Սնունդը չի կարող պատրաստվել և մատուցվել այն խոհանոցից/ռեստորանից, որը չի գործում բարին կից և չի համարվում մեկ ամբողջական տարածք: Պետք է լինի դուռ, որը կուղղորդի բարից անմիջապես դեպի առանձին թույլտվությամբ գործող խոհանոց, որը պետք է գտնվի միևնույն սեփականության ներքո:

Ցածր վտանգավորության ռեստորանի թույլտվությամբ, տարածքի մյուս ռեստորաններից անկախ գործող բարից պահանջվում է ստուգել պատվաստման կարգավիճակը փակ տարածքում սնունդ/խմիչք մատուցելիս: Օրինակ՝ սննդի մատուցման տարածքի ներսում գործող գարեջուր պատրաստելու կամ վաճառելու վայրերից պահանջվում է կատարել պատվաստման պահանջները, որոնք վերաբերում են տեղում սպառմանը:





Ի՞նչ Պետք Է Իմանան Գիշերային Ակումբները, Լաունջները, Բարերը, Գարեջրատները, Գինետները/գործարանները և Օղեգործարանները

6. Ինչպե՞ս աշխատակիցները պետք է իմանան, թե որն է պատվաստման փաստաթղթի ընդունելի ձևը: Վերապատրաստման ի՞նչ աղբյուրներ են հասանելի Շրջանում:

Լրացուցիչ տեղեկությունների համար գործատուները և աշխատակիցները կարող են ստուգել [Lnu Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության COVID-19-ի](#) կայքէջը: Ընթացիկ թարմացումների ուղեցույցը կարելի է գտնել [«COVID-19-ի Դեմ Պատվաստման Ապացույցի Ստուգում»](#) էջում:

7. Արդյո՞ք աշխատակիցները պետք է պահպանեն հաճախորդների պատվաստման կարգավիճակի կամ ստուգման գործընթացի վերաբերյալ արձանագրությունը:

Ոչ: Յուրաքանչյուր հաճախորդի թույլատրելի ստաժ լինել, օգտվել ծառայություններից կամ մասնակցել հաստատությունում անցկացվող գործողություններին՝ հաստատության սեփականատերը/ղեկավարությունը փաստում է, որ նախքան յուրաքանչյուր մասնակցի մուտք գործելը հաստատությունը պատշաճ կերպով ստուգել է նրանց պատվաստման կարգավիճակը: Բիզնեսը անհամապատասխանության համար կենթարկվի որևէ տույժի, եթե պարզվի, որ այն պատշաճ կերպով չի անցկացրել կարգավիճակի ստուգման գործընթացը:

8. Ի՞նչ պետք է անի աշխատակիցը, երբ հաճախորդը չի ներկայացնում պատվաստման ստուգման վավերական ձևը:

Եթե հաճախորդը չի ներկայացնում իր COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակի վավերական ապացույցը, լուսանկարով նույնականացման քարտի (ID) հետ միասին, նա կարող է նստել, սպասարկվել կամ մասնակցել գործողությունների միայն բացօթյա տարածքում, եթե լինեն հասանելի տեղեր:

Պատվաստման կարգավիճակի ստուգման վավերական ձև չներկայացնող հաճախորդներին թույլատրվում է մուտք գործել փակ տարածք միայն այն դեպքում, երբ նրանք կրում են լավ ծածկող դիմակ և մուտք են գործում միայն կարճ ժամանակով՝ 1) բացօթյա տարածք կամ պետքարան հասնելու համար 2) պատվեր անելու կամ վճարում կատարելու համար կամ 3) պատվերը վերցնելու համար՝ անկախ նրանից սնունդը ուտելու են տեղում փակ տարածքում, թե վերցնելու են տանելու համար: Այդ հաճախորդները չեն կարող մնալ փակ տարածքում սպասարկվելու կամ փակ տարածքներում գործողություններին մասնակցելու համար:

9. Ի՞նչ տեղի կունենա, եթե հայտնաբերվի, որ հաստատությունը չի ստուգում հաճախորդների և/կամ աշխատակիցների պատվաստման կարգավիճակը:

Շրջանի առողջապահական ոլորտի տեսուչները կայցելեն այդ հաստատություն և կստուգեն այդ հաստատությունների գործունեությունը սովորական աշխատանքային ժամերին: Եթե առաջին այցի ժամանակ տեսուչը որոշի, որ բիզնեսի գործունեությունը չի համապատասխանում Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանին (օրինակ՝ չի ստուգվում բոլոր հաճախորդների պատվաստման կարգավիճակը), ապա տեսուչը խախտումը կարձանագրի տեսչական հաշվետվության մեջ և կնշանակի օր՝ պահանջներին համապատասխանելու համար, և խախտումները պետք է շտկվեն մինչև այդ ամսաթիվը: Եթե հաջորդ ստուգման ընթացքում պարզվի, որ դեռ առկա է անհամապատասխանություն, ապա հաստատությանը կներկայացվի Վարչական Տույժ 500 դոլարի





COVID-19-ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՍ ԹԵՍՏԱԿՈՐՄԱՆ ՊԱՅԱՆՁ. ՀՏՀ
Ի՞նչ Պետք Է Իմանան Գիշերային Ակումբները, Լաունջները, Բարերը, Գարեջրատները, Գինետները/գործարանները և Օդեգործարանները

չափով, իսկ Հանրային Առողջության Վարչությունը կշարունակի հետևել տվյալ հաստատությունում համապատասխանության պահպանմանը:

10. Արդյո՞ք պատվաստման ստուգումն անհրաժեշտ է այս բիզնեսներում անցկացվող մասնավոր խնջույքների ժամանակ:

Այո, պատվաստման ստուգումը և դիմակ կրելուն ուղղված գործող պահանջները՝ անկախ պատվաստման կարգավիճակից, վերաբերում են փակ տարածքներում անցկացվող բոլոր մասնավոր խնջույքներին, որոնք անցկացվում են տվյալ բիզնեսներից որևէ մեկում՝ բարեր, գարեջրատներ, գիշերային ակումբներ և լաունջներ:

11. Արդյո՞ք պատվաստման ստուգումն անհրաժեշտ է վերցնել-տանելու պատվերների ժամանակ:

Ոչ, Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը թույլ է տալիս սահմանափակ պայմաններով մուտք գործել բիզնեսի փակ տարածքներ առանց պատվաստման կարգավիճակի ստուգման՝ պատվերը վերցնել-տանելու նպատակով: Թեև պարտադիր չէ, սակայն պատվերները վերցնել-տանելու դեպքում հաստատությունները կարող են որոշել ստուգել պատվաստման կարգավիճակը՝ որպես ընդունված գործողություն փակ տարածք մուտք գործող բոլոր հաճախորդների համար:

12. Արդյո՞ք դուք ունեք պաշտոնական ցուցանակ, որը փաստում է, որ պատվաստման ստուգումը օրինական պահանջ է:

[Հանրային Առողջության Վարչության ցուցանակը](#) կարող եք գտնել [COVID-19-ի Կանխարգելման Ուղղված Լավագույն Գործողություններ, Ուղեցույց Բիզնեսների և Աշխատակիցների Համար](#) կայքէջում:

13. Արդյո՞ք պատվաստման կարգավիճակի ստուգումից հետո դեռ պահանջվում է դիմակ կրել փակ տարածքներում:

Այո, շարունակվում է պահանջվել փակ տարածքներում դիմակ կրելը, նույնիսկ եթե անձը պատվաստված է: Դիմակները կարելի է հանել ակտիվորեն ուտելիս և խմելիս: Ուտելու և խմելու ընթացքում այցելուները, հաճախորդները կամ հյուրերը պետք է նստած լինեն սեղանի կամ բարի մոտ, տոմսերով նստելու թույլտվությամբ նստատեղերում կամ վայրերում: Խորհուրդ է տրվում տարբեր խմբերի միջև պահպանել ֆիզիկական հեռավորություն՝ նվազեցնելու վարակի տարածման վտանգն այն վայրերում, որտեղ հաճախորդներին թույլատրվում է ակտիվորեն ուտել կամ խմել:

14. Արդյո՞ք պահանջվում է կրկին ստուգել այն հաճախորդների պատվաստման կարգավիճակը, որոնց պատվաստումը նախկինում ստուգվել է:

Այո: Պատվաստման կարգավիճակը պետք է ստուգվի յուրաքանչյուր անգամ, երբ հաճախորդը ներս է մտնում:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՏՎՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՊԱՅԱՆՁՈՒՄ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍՏՈՒԳՈՒՄ



15. Արդյո՞ք լիարժեք ծառայություններ տրամադրող, բարով համակցված ռեստորանից պահանջվելու է ստուգել հաճախորդների պատվաստման կարգավիճակը՝ փակ տարածքներ մուտք գործելու համար:

Ռեստորաններին խստորեն խորհուրդ է տրվում իրականացնել պատվաստման կարգավիճակի ստուգում, սակայն այդ պահանջը չի վերաբերում լիարժեք ծառայություններ տրամադրող ռեստորաններին, անգամ, եթե այդ ռեստորանները գործում են համակցված բարերով: [Խնդրում ենք նկատի ունենալ](#), որ 2021 թվականի նոյեմբերի 8-ից սկսած, Լոս Անջելես Քաղաքում տեղակայված ռեստորանները՝ սնունդ և ըմպելիքներ մատուցող հաստատությունների հետ մեկտեղ, ենթակա են Լոս Անջելես քաղաքի Պատվաստումների Վերաբերյալ Հրամանագրին: Հրամանագրին ենթակա վայրերի ամբողջական ցանկը և լրացուցիչ տեղեկությունները հասանելի են Լոս Անջելես Քաղաքի [SafePass LA](#) կայքէջում և [Հաճախ Տրվող Հարցերի \(ՀՏՀ\) էջում](#):

16. Արդյո՞ք ռեստորաններից, որոնք հիմնականում հանդիսանում են ընտանեկան ժամանցի կենտրոններ, պահանջվելու է ստուգել փակ տարածքներում գտնվող հաճախորդների պատվաստման կարգավիճակը:

Ոչ, եթե հաստատությունն ունի լիարժեք ծառայություններ տրամադրելու թույլտվություն: Այդ դեպքերում, ընտանեկան զվարճանքի տարածքում գտնվող հաճախորդները պետք է մշտապես դիմակ կրեն՝ օգնելու նվազեցնել հաստատության տարածքում վարակման վտանգը: [Խնդրում ենք նկատի ունենալ](#), որ 2021 թվականի նոյեմբերի 8-ից սկսած Լոս Անջելես քաղաքում տեղակայված ընտանեկան ժամանցի կենտրոնները ենթակա են Լոս Անջելես քաղաքի Պատվաստումների մասին Հրամանագրին: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են Լոս Անջելես Քաղաքի [SafePass LA](#) կայքէջում և [Հաճախ Տրվող Հարցերի \(ՀՏՀ\) էջում](#):

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ԵՎ ՎԱՐՁՈՒ, ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐ

17. Ո՞վքեր են ընդգրկված որպես «աշխատակիցներ»: Արդյո՞ք կատարողներից/ ելույթ ունեցողներից պահանջվում է, նույնիսկ եթե նրանք չեն աշխատում բարում/ լաունջում/ գիշերային ակումբում:

Աշխատակիցներ են համարվում անձնակազմի բոլոր այն անդամները, ովքեր պարբերաբար գտնվում են հաստատությունում: Այն ներառում է հաճախորդների հետ անձամբ շփվող աշխատակիցներին, հաճախորդների հետ անմիջական շփում չունեցող աշխատողներին (օր.՝ խոհանոցում), կես դրույքով/լրիվ դրույքով աշխատող, սեզոնային անձնակազմին և կատարողներին/ելույթ ունեցողներին:

Շատ բիզնեսներ կարող են ունենալ «անկախ պայմանագրային աշխատողներ», որոնք աշխատում են տեղում, սակայն չեն համարվում աշխատակիցներ: Այնուամենայնիվ, Կալիֆորնիայի Նահանգային Աշխատանքային Օրենսգիրքը որոշ անկախ պայմանագրային աշխատողների համարում է աշխատակիցներ/ աշխատողներ: Ստուգեք Կալիֆորնիայի Արդյունաբերական Հարաբերությունների Վարչության [Անկախ Պայմանագրային Աշխատողներ և Աշխատակցներ](#) կայքէջը:

18. Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ աշխատակիցներին պատվաստվել:



Ի՞նչ Պետք Է Իմանան Գիշերային Ակումբները, Լաունջները, Բարերը, Գարեջրատները, Գինետները/գործարանները և Օղեգործարանները

Ավելի շատ տեղեկություններ փնտրող աշխատակիցների կամ այն աշխատակիցների հետ, որոնք վստահ չեն պատվաստման հարցում, գրուցեք իրենց մտահոգությունների մասին և օգնեք գտնել COVID-19-ի դեմ պատվաստանյութերի վերաբերյալ վստահելի, իրական տեղեկություններ: Դուք կարող եք ուղղորդել նրանց [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) կայքէջ՝ COVID-19-ի դեմ գոյություն ունեցող երեք պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության մասին տեղեկությունների և ձեր ժամանակացույցին համապատասխանող պատվաստման վայր գտնելու համար: Պատվաստումն անվճար է, և COVID-19-ի դեմ պատվաստման շատ վայրերում ժամադրություններ անհրաժեշտ չեն: Պատվաստման յուրաքանչյուր վայրի մասին տեղեկություններ կարելի է գտնել վերոնշյալ կայքէջում:

COVID-19-ի պատվաստանյութերը լայնորեն հասանելի են նաև Լոս Անջելեսի Շրջանի մանրածախ վաճառք իրականացնող մեծ դեղատներում (օր.՝ CVS և Walgreens), տեղային դեղատներում և ձեր հիմնական բժշկական ծառայությունների մատակարարների մոտ: Դիտարկեք նրանց վճարովի բացակայության տրամադրումը, որպեսզի նրանք պատվաստվեն և անհրաժեշտության դեպքում վերականգնվեն [պատվաստման կողմնակի ազդեցություններից](#), որոնք սովորաբար առաջանում են պատվաստումից հետո առաջին 2 օրվա ընթացքում: Դիտարկեք աշխատակիցների [պատվաստումը տեղում կատարելը](#): Այցելեք մեր [պատվաստումների գործընկերների կայքէջը](#)՝ պատվաստում տրամադրողների ցանկը գտնելու համար, որոնք պատվաստում կատարելու համար ձեզ մոտ կբերեն շարժական կլինիկա:

19. Ի՞նչ անել այն դեպքում, երբ իմ աշխատակիցները ազատված են պատվաստման պահանջից:

Աշխատակիցները կարող են ազատվել այդ պահանջից միայն այն դեպքում, երբ գործատուին տրամադրեն իրենց կողմից ստորագրված մերժման ձևը, որում նշվում է, որ աշխատակիցը հրաժարվում է պատվաստումից՝ հիմնվելով ազնիվ կրոնական համոզմունքների վրա, կամ անձը ազատված է COVID-19-ի դեմ որևէ պատվաստանյութ ստանալուց՝ Բավարար Բժշկական Պատճառների հիմքով: Բավարար Բժշկական Պատճառները հիմնավորող ձևերը պետք է պարունակեն գրավոր տեղեկություն, որը ստորագրված է բուժող բժշկի, բուժակի կամ մեկ այլ լիցենզավորված բժշկական մասնագետի կողմից, որը գործում է բժշկի արտոնագրի ներքո, և նշում է, որ անձը համապատասխանում է այդ պահանջից ազատմանը, ինչպես նաև նշում է, թե որքան ժամանակ է աշխատակիցը անկարող լինելու ստանալ պատվաստանյութը:

Պահանջից ազատված աշխատակիցները պետք է շաբաթական առնվազն մեկ անգամ COVID-19-ի թեստ հանձնեն՝ COVID-19-ի կամ SARS-CoV-2 ՊՇՌ կամ հակազենի թեստ, որին տրվել է Արտակարգ Իրավիճակների ժամանակ Օգտագործման Թույլտվություն (EUA) կամ որը հաստատվել է ԱՄՆ Սննդամթերքի և Դեղորայքի Վարչության (FDA) կողմից: Ազատված աշխատակիցները պետք է մշտապես կրեն վիրաբուժական դիմակ կամ NIOSH-ի կողմից հաստատված ավելի լավ պաշտպանություն ապահովող շնչառական սարք:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՈՉ-ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ, ՈՉ ՀԱՃԱԽՈՐԴ-ԱՅՑԵԼՈՒՆԵՐ





20. Արդյո՞ք հաստատություններից պահանջվելու է ստուգել կարգավորման և վերանորոգման ծառայություններ իրականացնող այն տեխնիկական աջակցության մասնագետների պատվաստման կարգավիճակը, որոնք մուտք են գործում փակ տարածք՝ ծառայություն իրականացնելու համար: Օրինակ՝ ջրի և գազի խողովակների վերանորոգում կատարող և շենքի պահպանության այլ մասերը ապահովող պայմանագրային աշխատողների դեպքում:

Ոչ: Կարգավորման և վերանորոգման ծառայություններ իրականացնող ժամանակավոր այցելուներից, որոնք գտնվում են հաստատությունում ծառայություն մատուցելու նպատակով, չի պահանջվելու ներկայացնել պատվաստման ապացույց հաստատության փակ տարածքներ մուտք գործելու համար: Նրանք պետք է դիմակ կրեն փակ տարածքներում գտնվելիս: Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանի պահանջը մուտք գործելիս պատվաստման ապացույց ներկայացնելու վերաբերյալ ուղղված է հաստատության հաճախորդներին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

21. Կան «Հանրային Առողջության Պատասխանատուի մի քանի Հրամաններ», որոնք հրապարակվել են: Ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ որ մեկին հետևել:

Հանրային Առողջության Վարչությունը որդեգրել է գիտության և հանրային առողջության փորձագիտության հրա հիմնված փուլային մոտեցում՝ նկատի ունենալով տեղային հանգամանքները և վտանգները, որպեսզի վերաբացի բիզնեսները և նվազեցնի այդ հաստատություններում ու համայնքում վարակի տարածման վտանգը: Հետևաբար՝ կարևոր է հաճախակի այցելել Հանրային Առողջության կայքէջ՝ Հանրային Առողջության Պատասխանատուի վերջին հրամանների, կանոնավոր թարմացումների և ամենավերջին ուղեցույցների համար: Դրանք կարելի է գտնել ph.lacounty.gov/Coronavirus կայքէջում: Բացի Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանից՝ կայքն ունի մի շարք ծավալուն աղբյուրներ, ինչպիսիք են լավագույն գործողությունների վերաբերյալ փաստաթղթերը տարբեր բիզնես ոլորտների և հանրության համար:

